

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ



## «Տեխնոլոգիա 2»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐԲ-ՏԵՏՐԻ  
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՅՉԻ ՀԱՄԱՐ

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ**

**«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 2»**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ**

**ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ**

**Երևան-2024**

ՀՏԴ  
ԳՄԴ

Օրդյան Ն. Ա., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ., Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Տեխնոլոգիա 2»: Աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Եր.: Էդիթ Պրինտ, 2024. - 24 էջ

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 29.02.2024 թվականի 284-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

**Մասնագիտական խմբագիր՝** մ. գ. թ., դոցենտ Ա. Հ. Սվաջյան

**Գրախոսներ՝**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Հովյան Գ. Ռ.

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սարատիկյան Լ. Հ.

**Հեղինակներ՝**

Օրդյան Ն. Ա., տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Պետրոսյան Ս. Ս.

Օհանյան Հ. Վ.

**Համակարգչային ձևավորում՝** Ստեփանյան Ա. Ռ., Դավթյան Հ. Լ.

**Խմբագիր՝** Սարգսյան Հ. Ա.

Սույն ուղեցույցի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանի «Տեխնոլոգիա 2» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN

**Տպաքանակը՝ 150 օրինակ**

ՀՏԴ

ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ՆԱԽԱԲԱՆ .....</b>	<b>4</b>
<b>ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ .....</b>	<b>5</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....</b>	<b>23</b>

## ՆԱԽԱԲԱՆ

Սույն մեթոդական ուղեցույցը մշակված է «Տեխնոլոգիա 2» աշխատանքային գիրք-տետրին կից առաջադրանքների մեթոդական սկզբունքների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դրանց իրականացման առանձնահատկությունների մեկնաբանման և արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով:

Աշխատանքային գիրք-տետրը ներառում է առաջադրանքներ, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի 2-րդ դասարանի աշխատանքային տետրի տրամաբանությանը, ընդգրկում են դասընթացի բոլոր թեմաները և կարող են իրականացվել սովորողների կողմից ինչպես ուսուցչի ուղղորդմամբ կամ աջակցությամբ, այնպես էլ՝ ինքնուրույն: Այս աշխատանքային գիրք-տետրը սովորողներին հնարավորություն կընձեռի ավելի լավ հասկանալ, կրկնել և ամրապնդել դասընթացի նյութը, փորձել սեփական ուժերն ինչպես պարզ, այնպես էլ ավելի բարդ առաջադրանքներ կատարելիս:

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

### **Առաջադրանք 1. Ծանոթացի՛ր նյութերին: Գծով միացրո՛ւ նյութը համապատասխան գամբյուղին:**

Առաջին դասին ուսուցիչը ներկայացնում է Տեխնոլոգիայի դասերին գործածվող նյութերի տեսակները: Նա ցույց է տալիս 2-րդ էջի նկարը և դիմում աշակերտներին. «Տեխնոլոգիայի դասերին մենք կօգտագործենք հետևյալ նյութերը. բնական նյութեր՝ տերևներ, սերմեր, ճյուղեր, կոն, կաղին, վայրի շագանակ և այլն, գրենական պիտույքներ՝ թուղթ, մատիտներ, սոսինձ, ծեփոն, արհեստական նյութեր՝ ֆոամիրան, փայլաթիթեղ, մանածագործական նյութեր՝ կտոր, թել: Ուշադիր ուսումնասիրեք «Տեխնոլոգիա» առարկայի աշխատանքային գիրք-տետրի 3-րդ էջի նկարը: Ձախ կողմում պատկերված են իմ կողմից թվարկված նյութերը, իսկ աջ կողմում՝ նյութերի ընդհանրական անվանումով գամբյուղներ: Նայե՛ք նկարին և մատիտով միացրե՛ք նյութը համապատասխան գամբյուղին»:

Այս դասին ուսուցիչը երեխաների հետ վերհիշում է առաջին դասարանում բնական նյութերից աշխատանքների կատարման հաջորդականությունը. «Երեխանե՛ր, եկեք վերհիշենք տերևների չորացման հաջորդական քայլերը: Ձեր հավաքած տերևները կարող եք չորացնել՝ որևէ գրքի մեջ տեղադրելով այն և գրքի վրա որևէ ծանր առարկա դնելով: Բնական նյութերից մենք կպատրաստենք ապլիկացիաներ: Երեխանե՛ր, ի՞նչ է ապլիկացիան. այն դեկորատիվ արվեստի տեխնիկա է, որը ենթադրում է տարբեր նյութերից (թուղթ, կտոր, կաշի, չորացրած տերևներ, ծաղիկներ և այլն) որոշակի եզրագծով կտրված պատկերների ամրացումը որոշակի հիմքի, օրինակ՝ թղթին: Ապլիկացիայի տեխնիկայով կարելի է ներկայացնել որևէ իր, կերպար, կամ տարբեր պատկերների պարզ համադրություն՝ կոմպոզիցիա: Չորացրած տերևներն ու ծաղիկները մենք թղթին

կամրացնենք սոսնձով: Դրա համար տերևի վրա պետք է մի քիչ սոսինձ քսել, տերևը զգուշորեն տեղադրել թղթի հարթությանը, վրան մեկ այլ թուղթ դնել և մի փոքր սեղմել: Այդպես բոլոր մասնիկները սոսնձելուց հետո հարկավոր է աշխատանքը թղթով ծածկել և վրան որևէ ծանր իր դնել, օրինակ՝ գիրք: Այդպես պետք է թողնել մի քանի ժամ, մինչև չորանա»:

## **Առաջադրանք 2.**

- ա) Շոշափի՛ր տարբեր նյութեր՝ թուղթ, ծեփամածիկ, սեղան, գրիչ, ռետին, պայուսակ և այլն: Ի՞նչ ես զգում: Ո՞րն է դրանցից ավելի ծանր, իսկ ո՞րը՝ թեթև: Ո՞րն է փափուկ, իսկ ո՞րը՝ կոշտ:**
- բ) Նայի՛ր շուրջդ, անվանի՛ր/ցո՛ւյց տուր ծանր և թեթև, փափուկ և կոշտ առարկաները:**
- գ) Յուրաքանչյուր վանդակի մեջ գրի՛ր այն հատկությունները, որոնք բնորոշ են տվյալ նյութին:**

Սա հետազոտական աշխատանք է, որի նպատակն է սովորողների մոտ ձևավորել գիտելիքներ նյութերի հատկությունների մասին: Առաջադրանքը կատարելու համար ուսուցիչը պետք է երեխաներին բաժանի յուրաքանչյուր նյութից մի նմուշ՝ քար, թուղթ, ծեփոն, փայտ, բամբակ, թել:

ա) Ուսուցիչը բացատրում է, թե ինչ է նյութի հատկությունը: Նա բերում է տարբեր օրինակներ, օրինակ՝ թվարկում է ծանր և թեթև առարկաներ: Առաջարկում է սկզբում վերցնել թուղթը և շոշափել: Նա դիմում է աշակերտներին. «Երեխանե՛ր, ի՞նչ եք զգում, երբ շոշափում եք թուղթը: Այն հարթ է և թեթև: Հիմա վերցրե՛ք քարը, շոշափեք և ասացե՛ք. ինչպիսի՞ն է քարը թղթի համեմատությամբ՝ ծա՞նր, թե՞ թեթև, հա՞րթ, թե՞ խորդուբորդ: Հիմա հերթով շոշափեք ձեր սեղանի վրա գտնվող բոլոր նյութերը և ասացեք, թե դրանցից որն է ավելի ծանր: Նյութերը միմյանցից կարող են տարբերվել նաև ուրիշ

հատկություններով, օրինակ՝ դրանք կարող են լինել փափուկ և կոշտ: Հիմա ձեզ մոտ գտնվող նյութերը համեմատեք ըստ այդ հատկանիշի՝ դրանցից ո՞րն է փափուկ, իսկ ո՞րը՝ կոշտ»:

բ) Ուսուցիչն առաջարկում է երեխաներին թվարկել ծանր և թեթև, փափուկ և կոշտ առարկաները: Կարելի է կազմակերպել խաղ. ուսուցիչն անվանում է որևէ իր և աշակերտներին առաջարկում անվանել դրանից ավելի ծանր իրեր: Այսպիսով, նրանք հերթով պետք է ասեն ավելի ծանր իրերի անվանումներ:

գ) Տետրի համապատասխան մասում երեխաները մատիտով գրում են նկարված նյութերին բնորոշ հատկությունները:

### **Առաջադրանք 3. Ասա՛, ո՞ր առարկաներն են ավելի հեշտ ձևափոխվում՝ դեֆորմացվում: Որո՞նք են մնում անփոփոխ (Հավելված 1):**

Այս առաջադրանքը նախորդի տրամաբանական շարունակությունն է, որը նույնպես հետազոտություն է: Առաջադրանքն ամրապնդում է սովորողների գիտելիքները նյութերի հատկությունների վերաբերյալ, այն առաջին հերթին զարգացնում է երեխայի տեսողական ընկալումը, ուշադրությունը: Առաջադրանքը բաղկացած է երկու մասից՝ ա և բ:

ա) Առաջադրանքի սկզբնական մասը կատարվում է հավելված 1-ի օգնությամբ. հավելվածից մկրատով կտրվում են նյութերի նկարները և սոսնձվում աղյուսակի համապատասխան մասում: Առաջարկում ենք աշխատանքը կազմակերպել զույգերով: Եթե ԿԱՊԿ ունեցող սովորողը դժվարանա մկրատով կտրել, ապա նա կկատարի միայն սոսնձման աշխատանքը: Հարկավոր է աշխատանքը կատարելուց առաջ ԿԱՊԿ ունեցող սովորողին հնարավորություն տալ շոշափելով ծանոթանալ տարբեր նմուշների առանձնահատկություններին, հետո միայն կատարել առաջադրանքը:



բ) Ուսուցիչը դասարանում կազմակերպում է քննարկում նյութերի մասին՝ հարցնելով՝ արդյո՞ք հնարավոր է ցանկացած նյութից ամեն ինչ պատրաստել:

**Առաջադրանք 4. Օգտվելով նկարից՝ հաջորդ էջի վրա շորացրած տերևները սոսնձելով պատրաստի՛ր ապլիկացիա: Կարող ես ընտրել պատկերներից մեկը կամ մի քանիսը:**

Այս առաջադրանքը կարևոր է մանր շարժունակության զարգացման առումով: Առաջադրանքի նպատակն է երեխաների մոտ ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու որոշակի հմտություններ: Նկարում տրված են աշնանային տերևներից պարզ ապլիկացիաների նմուշներ, որոնք պատկերում են ծանոթ կենդանիներ և միջատներ: Առաջադրանքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում հարկավոր է ընտրել դրանցից մեկը և, նկարին նայելով, տետրի հաջորդ էջում հատկացված մասում տերևները սոսնձելով՝ պատրաստել ապլիկացիա: Այս առաջադրանքը կատարելիս կարող է հարկ լինի որոշ տերևներ մկրատով կտրել: Այդ դեպքում ԿԱՊԿ ունեցող սովորողին կարող է օգնել դասընկերը: Աշխատանքն ամբողջովին ավարտելուց հետո տետրի էջը կտրվում է և պատրաստի աշխատանքը պահվում թղթապանակում:

**Առաջադրանք 5. Չորացրած տերևներով և սոսնձով պատրաստի՛ր նկարում պատկերված կոմպոզիցիան: Կարող ես սոսնձել անմիջապես նկարի վրա:**

Առաջադրանքի երկրորդ մասում առաջարկվում է, արդեն մեկից ավելի կերպարներ օգտագործելով, պատրաստել բարդ ապլիկացիա: Աշխատանքը կատարվում է՝ տետրի նկարի վրա տերևները սոսնձելով: Նախորդ առաջադրանքի նման այս դեպքում ևս աշխատանքն

ամբողջովին ավարտելուց հետո տետրի էջը կտրվում է և պատրաստի աշխատանքը պահվում թղթապանակում:

**Առաջադրանք 6. Ծեփոնից խճանկար: Ծեփոնի և տարբեր սերմերի օգնությամբ ձևավորի՛ր պատկերը և ստացի՛ր գեղեցիկ նախշ:**

Առաջադրանքը կատարելու համար հարկավոր են տարբեր բույսերի սերմեր և ծեփոն: Այս առաջադրանքի համար ևս նախատեսված է նախօրոք էջը մկրատով կտրել, քանի որ պատրաստի վիճակում այն ծավալուն է լինելու: Պատրաստի աշխատանքը մյուսների հետ կպահվի թղթապանակում: Պատկերը բաժանված է համաչափ մասերի, որոնցից յուրաքանչյուրի մեջ տարբեր գույների սերմերը ծեփոնով ամրացնելով՝ կարելի է ստանալ գեղեցիկ նախշ: Աշխատանքի համար հարկավոր է նախապատրաստել տարբեր գույների սերմեր (արևածաղկի, դդմի և այլն), ինչպես նաև ձավարեղեն՝ բրինձ, հնդկաձավար, ոսպ, վարսակի փաթիլներ և այլն: Նախշի տարբեր հատվածներում կարելի է քսել տարբեր գույների ծեփոն, ինչը լրացուցիչ երանգ կհաղորդի պատրաստի նախշին:

Առաջադրանքի նպատակն է նպաստել երեխաների մանր շարժողականության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

Առաջադրանքը նախընտրելի է կազմակերպել զույգերով՝ դասարանի մյուս աշակերտների հետ: Ուսման դժվարություններ ունեցող երեխան, թղթի վրա հարթեցնելով, կամրացնի ծեփոնը, իսկ դասընկերը կօգնի ամրացնել սերմերը:

**Առաջադրանք 7. Հավաքի՛ր բնական նյութեր՝ կաղին, կոն, տերևներ, ճյուղեր, սերմեր: Նայի՛ր նկարին և վերհիշի՛ր դրանց անվանումները: Ո՞ր ծառերից են դրանք ստանում: Նայի՛ր նկարին և մատիտով միացրո՛ւ ծառը և դրա սերմը:**

Առաջադրանքը միջառարկայական կապ ունի «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի հետ: Այս առաջադրանքը զարգացնում է երեխաների վերլուծական մտածողությունը, ուշադրությունը: Նպատակն է ամրապնդել սովորողների գիտելիքները ծառերի մասին: Բերված են 2 աղյուսակներ, որոնցից մեկում նկարված են ծառեր, իսկ մյուսում՝ այդ ծառերի պտուղները՝ խառը հաջորդականությամբ: Հարկավոր է մատիտով միացնել ծառը և դրա սերմը: Առաջադրանքը կառուցված է ԿԱՊԿ ունեցող սովորողներին հարմարեցված տարբերակով. ծառերի նկարներն ընտրված են այնպես, որ նկարում երևում են տվյալ ծառի պտուղները: Առաջադրանքը զարգացնում է սովորողների ուշադրությունը և վերլուծական մտածողությունը:

**Առաջադրանք 8. Հետազոտական աշխատանք: Հավաքի՛ր կոներ և դրանցով փորձ կատարի՛ր: Եթե քո հավաքած կոները շատ բացված են, ապա կարող ես դրանք դարձնել փակված՝ կես ժամ թողնելով ջրի մեջ:**

Առաջադրանքն ունի հետազոտական բնույթ: Այն սովորողների մոտ ձևավորում է հետազոտություններ կատարելու նախնական ունակություններ, զարգացնում է ուշադրությունը և դիտողականությունը:

**Առաջադրանք 9. Ծեփոնից և բնական նյութերից կերպարներ (կենդանիներ):**

**ա) Ոզնի:** Նշված հաջորդական քայլերով պատրաստի՛ր ոզնի: Կարող ես նաև ծեփոնից մրգեր պատրաստել և դնել ոզնու վրա:

**բ) Արմավենի:** Նկարում պատկերված քայլերի հաջորդականությամբ պատրաստի՛ր արմավենի կոնից և ծեփոնից:

**գ) Կրիա:** Նկարում պատկերված քայլերի հաջորդականությամբ պատրաստի՛ր կրիա վայրի շագանակից և ծեփոնից:

Առաջադրանքը բաղկացած է երեք մասից, որոնցից յուրաքանչյուրը կատարելու համար հարկավոր է նախապատրաստել տարբեր գույների ծեփոն, կոներ և վայրի շագանակներ: Առաջադրանքներից առաջին երկուսի համար հարկավոր է նախապատրաստել փակված կոներ (նախորդ առաջադրանքի քայլերով):

Այս առաջադրանքի նպատակն է ձևավորել գիտելիքներ տարբեր կենդանիների և ծառատեսակների մասին, զարգացնել ուշադրությունը, պատկերացումը, ստեղծագործական ունակությունները: Այն զարգացնում է նաև մանր շարժունակությունը, ձևավորում տարրական աշխատանքային հմտություններ:

Եթե երեխան դժվարանա կատարել այս առաջադրանքը, ուսուցիչը կարող է ընդգրկել նաև դասարանի մյուս աշակերտներին: ԿԱՊԿ ունեցող երեխան կարող է կոները նախապատրաստել՝ նախօրոք դրանք թրջելով, որպեսզի փակվեն, ինչպես նաև ծեփոնից որոշ պարզ մասերը պատրաստել, իսկ դասընկերը կհավաքի պատկերը: Այսպիսով, ուսման դժվարություններ ունեցող երեխան կունենա ավարտուն աշխատանք:

**Առաջադրանք 10. Ծեփոնից տնակ: Ծեփոնից պատրաստի՛ր տարբեր երկարության բարակ ձողեր և նկարի օգնությամբ հավաքի՛ր տնակ (Հավելված 2):**

Այս առաջադրանքները ավարտուն վիճակում ծավալուն են լինելու, դրա համար առաջարկվում է էջը նախօրոք մկրատով կտրել: Հավելված 2-ից մկրատով կտրվում է գծապատկերը, որը համապատասխանում է տնակի տարբեր մասերի չափերին: Մասերը միմյանցից տարբերելու համար գծապատկերն արված է տարբեր գույներով՝ տանիքի մասերը կարմիր են, պատերը՝ մոխրագույն, պատուհանը՝ նարնջագույն, դուռը՝ դարչնագույն: Ծեփոնի կտորները սեղանի վրա գլորելով՝ երեխան պատրաստում է բարակ ձողեր, դրանք դնում գծապատկերի համապատասխան գույնի վրա և ծեփոնի համար նախատեսված հատիչով կտրում անհրաժեշտ չափով: Գունավոր ծեփոնի կտորները զգուշորեն դնում է տետրում նկարված տնակի համապատասխան մասերի վրա (տնակը ևս նույն գույներով է գունավորված՝ հեշտ կողմնորոշվելու համար) և, մատներով սեղմելով, ամրացնում: Այս առաջադրանքը ձևավորում է պարզ սխեմաներ կարդալու և պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ, զարգացնում պատկերացումը, նպաստում երեխաների մանր շարժունակության զարգացմանը:

**Առաջադրանք 11. Ծեփոնից բաժակ: Պատրաստի՛ր ծեփոնից բաժակ նկարում պատկերված քայլերի հաջորդականությամբ:**

Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ որևէ գույնի ծեփոն (օրինակում բերված է դարչնագույնը): Պատրաստման հաջորդական քայլերը մանրամասն ներկայացված են առաջադրանքում:

Այս առաջադրանքի նպատակն է զարգացնել մանր շարժունակությունը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

Առաջադրանքը նախընտրելի է կազմակերպել զույգով: ԿԱՊԿ ունեցող երեխան կարող է ծեփոնից բարակ ձողերը գլորել, իսկ դասընկերը կօգնի մասերը միմյանց ամրացնելով ամբողջացնել բաժակը:

**Առաջադրանք 12. Ծեփոնով պատրաստի՛ր տարածական կոմպոզիցիա: Քո պատրաստած պինգվինը կարող ես պահել դասարանի անկյունում:**

Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է ունենալ երեք գույնի ծեփոն՝ սև, սպիտակ և դեղին: Պատրաստման հաջորդական քայլերը մանրամասն ներկայացված են առաջադրանքում:

Այս առաջադրանքի նպատակն է նպաստել երեխաների մանր շարժունակության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

Նախորդ առաջադրանքի նման այս առաջադրանքը ևս նախընտրելի է կազմակերպել զույգերով՝ դասարանի մյուս աշակերտների հետ: ԿԱՊԿ ունեցող երեխան կարող է ծեփոնից պինգվինի առանձին մասերը պատրաստել, իսկ դասընկերը կօգնի մասերը միմյանց ամրացնելով ամբողջացնել կերպարը:

**Առաջադրանք 13. Թղթից խճանկար: Նկարի վրա հավաքիր խճանկար նշված քայլերով:**

Այս առաջադրանքը ևս ավարտուն վիճակում ծավալուն է լինելու, դրա համար հարկ է նախօրոք էջը մկրատով կտրել: Աշխատանքը կատարելու համար հարկավոր է ունենալ նկարի պատկերների գույներին համապատասխան գունավոր թղթեր (երեխայի

ցանկությամբ կարելի է գույները փոխել): Նկարի վրա կան բազմաթիվ սպիտակ շրջաններ, որոնց վրա պետք է սոսինձ քսել և գունավոր թղթերի պատռված մասնիկները սոսնձել դրանց վրա: Առաջադրանքի նպատակն է նպաստել երեխաների մանր շարժողականության զարգացմանը, ձևավորել պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

**Առաջադրանք 14. Անձեռոցիկներով խճանկար: Սպիտակ անձեռոցիկի կտորները պատռի՛ր, ձեռքով ճմռթի՛ր, գնդիկներ պատրաստի՛ր, ապա դրանք սոսնձի՛ր նկարի սպիտակ մասերում: Արդյունքում կստանաս ձմեռային տեսարանի խճանկար:**

Աշխատանքը նպաստում է մանր շարժունականության զարգացմանը, ձևավորում պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ: Այն կատարելու համար հարկավոր է ունենալ սպիտակ անձեռոցիկներ, սոսինձ և վրձին: Տետրի էջը պետք է նախօրոք մկրատով կտրել, անձեռոցիկը պատռելով՝ մանր կտորներ ստանալ և, ձեռքերի մեջ ճմռթելով ու գլորելով, գնդիկներ պատրաստել: Նկարի սպիտակ մասերում վրձնով պետք է սոսինձ քսել և թղթյա գնդիկները սոսնձել նկարին: Եթե երեխան դժվարանա ամբողջ առաջադրանքն ինքնուրույն կատարել, ապա կարելի է աշխատանքը կազմակերպել զույգով կամ խմբով:

**Առաջադրանք 15. Ամանորի բացիկ (Հավելված 3):**

Առաջադրանքը կատարվում է հավելված 3-ի օգնությամբ: Կտրվում է բացիկի հիմքը, որի վրա նշված է ծալելու գիծը: Հավելվածում կա նաև եղևնու նկար, որը համաչափ պատկեր է, և պետք է ձևավորել: Սկզբում կտրվում է ուղղանկյունաձև թղթի կտորը, որը նշված տեղից ծալվում է և վրայի եզրագծով կտրվում: Ստացված եղևնու պատկերը սոսնձվում է բացիկի վրա, որից հետո կարելի է

մատիտով աստղեր կամ ձյան փաթիլներ նկարել և ամբողջովին ձևավորել բացիկը:

**Առաջադրանք 16. Երկրաչափական պատկերներով ապլիկացիաներ: Հավելվածից մկրատով կտրի՛ր տարբեր գույների երկրաչափական պատկերները և սոսնձի՛ր նկարի համապատասխան տեղերում: Ի՞նչ պատկերներ ստացար, անվանի՛ր դրանք: Թվարկի՛ր երկրաչափական պատկերների անվանումները (Հավելված 4):**

Այս առաջադրանքն ամրապնդում է երկրաչափական պատկերների մասին գիտելիքները, զարգացնում ուշադրությունը, երևակայությունը, պատկերացումը, ձևավորում պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ: Բոլոր պատկերները կառուցվում են եռանկյան, քառանկյան և շրջանի օգնությամբ: Առաջադրանքը կատարելու համար ԿԱՊԿ ունեցող երեխային դասընկերը կօգնի ճիշտ դասավորել մասերը՝ պատկերները ստանալու համար:

**Առաջադրանք 17. Հավելվածից մկրատով կտրտի՛ր պատկերի մասերը և սոսնձի՛ր համապատասխան տեղերում (Հավելված 5):**

Այս առաջադրանքը ևս ամրապնդում է երկրաչափական պատկերների մասին գիտելիքները, զարգացնում ուշադրությունը, երևակայությունը, պատկերացումը, ձևավորում պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ: Ի տարբերություն նախորդ առաջադրանքի՝ այս առաջադրանքը հավաքվում է տեսրում նկարված նկարի վրա՝ հավելվածից կտրված մասնիկները սոսնձելով:



**Առաջադրանք 18. Չինական գլուխկոտրուկ (Թանգրամ):**  
**Թանգրամի մասնիկների օգնությամբ հավաքի՛ր պատկերները**  
**(Հավելված 6):**

Առաջադրանքի կատարման համար սովորողը հավելվածից մկրատով կտրում է չինական գլուխկոտրուկի մասնիկները և շարում նկարի կողքին՝ ստանալով նկարում բերված պատկերը: Կարելի է գլուխկոտրուկի մասերը սոսնձել հաստ ստվարաթղթի վրա, հետո կտրել եզրագծով: Այս առաջադրանքը ևս ամրապնդում է գիտելիքները երկրաչափական պատկերների մասին, զարգացնում ուշադրությունը, երևակայությունը, պատկերացումը և տրամաբանությունը:

**Առաջադրանք 19. Թղթյա կառուցվածքներ: Մկրատով կտրի՛ր**  
**կիսաշրջանները և դրանցով հավաքի՛ր պատկերը: Ասա՛, ի՞նչ**  
**ստացար (Հավելված 7):**

Այս առաջադրանքը նման է նախորդին. սովորողը հավելվածից մկրատով կտրում է պատկերի մասերը և, դրանք շարելով, ստանում է պատկեր: Սակայն այս դեպքում մասերը սոսնձվում են տետրի մեջ: Ինչպես նախորդ առաջադրանքները, այս առաջադրանքը ևս ամրապնդում է գիտելիքները երկրաչափական պատկերների մասին, զարգացնում ուշադրությունը, երևակայությունը, պատկերացումը և տրամաբանությունը: Եթե ԿԱՊԿ ունեցող երեխան դժվարանա ամբողջովին ինքնուրույն կատարել առաջադրանքը, ապա դասընկերը կօգնի նրան որոշ աշխատանքներում, օրինակ՝ հավելվածից պատկերները եզրագծով կտրելով:

**Առաջադրանք 20. Դասընկերոջդ հետ միասին պատրաստի՛ր քառակուսի թղթեր՝ օրիգամի ծալելու համար:**

Այս առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է ունենալ թղթի կտորներ: Ուսուցիչն ասում է, որ հարկավոր է թուղթը դարձնել քառակուսի: Նա սովորողներին հիշեցնում է, որ քառակուսու բոլոր կողմերը հավասար են, հետևաբար քառակուսի ստանալու համար հարկավոր է թուղթն անկյունագծով ծալել՝ ինչպես ցույց է տրված նկարում:

Այս առաջադրանքը ևս ամրապնդում է գիտելիքները երկրաչափական պատկերների մասին, զարգացնում ուշադրությունը, երևակայությունը, պատկերացումը, ձևավորում պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

**Առաջադրանք 21. Քառակուսի թուղթը ծալի՛ր նկարում նշված հաջորդականությամբ:**

Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է ունենալ քառակուսի կտրված գունավոր թղթի կտորներ: Հարկավոր է նկարին նայելով ծալել այդ թղթի կտորները: Առաջադրանքի նպատակն է նպաստել մանր շարժունակության զարգացմանը: Երեխաների մոտ զարգանում է պատկերացումը, նրանք սովորում են նկարում պատկերված սխեման ընթերցել: Դա նպաստում է տարածական պատկերացման զարգացմանը:

**Առաջադրանք 22. Պատրաստի՛ր պարզ օրիգամիներ:**

Այս առաջադրանքը կատարելու համար ևս անհրաժեշտ է ունենալ քառակուսի կտրված գունավոր թղթի կտորներ: Հարկավոր է նկարին նայելով ծալել դրանք և ստանալ առաջադրանքում պատկերված պարզ օրիգամիները: Առաջադրանքի նպատակն է նպաստել մանր շարժունակության զարգացմանը: Երեխաների մոտ

զարգանում է պատկերացումը, նրանք սովորում են նկարում պատկերված սխեման ընթերցել: Այս առաջադրանքի ժամանակ պատրաստված պարզ օրիգամիները հարկավոր են հաջորդ առաջադրանքը կատարելու համար:

**Առաջադրանք 23. Օրիգամիներով կոմպոզիցիա: Նախորդ դասին պատրաստած օրիգամիներով հորինի՛ր կոմպոզիցիա, սոսնձի՛ր տետրի մեջ:**

Առաջադրանքը կատարելու համար օգտագործվում են նախորդ դասին պատրաստած պարզ օրիգամիները՝ ծրար, օղապարիկ և եռանկյուն: Հարկավոր է դրանցով ստանալ գեղեցիկ կոմպոզիցիա՝ տետրի մեջ հատկացված մասում դրանք սոսնձելով:

Այս առաջադրանքը զարգացնում է ուշադրությունը, երևակայությունը, պատկերացումը, ձևավորում պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

**Առաջադրանք 24. Թղթից պատրաստի՛ր համաչափ պատկերներ (Հավելված 8):**

Առաջադրանքն ամրապնդում է գիտելիքները երկրաչափական պատկերների մասին, զարգացնում ստեղծագործական ունակությունները և երևակայությունը, ձևավորում պարզ աշխատանքներ կատարելու հմտություններ:

Հավելված 8-ից մկրատով առանձնացվում են տարբեր գույնի ուղղանկյուններ, որոնց վրա տարատեսակ գծերով նշված են ծալքի տեղը և պատկերի կտրման եզրագիծը: Այնուհետև ուղղանկյունաձև թղթերը ծալվում են և եզրագծով կտրվում: Երբ ծալված տեղը բացվում է, ստացվում է համաչափ պատկեր: Այսպես պատրաստում են տերև, սունկ, ծաղիկ:

**Առաջադրանք 25. Համաչափ պատկերներով նախշ:**

**ա) Հավելվածից կտրի՛ր գունավոր քառակուսիները, դրանք ծալի՛ր նշված տեղերից և մկրատով կտրի՛ր նկարի եզրագծով: Ծալված մասը բացելով՝ կտեսնես համաչափ պատկեր՝ ծաղիկ կամ տերև: Դրանք միմյանց կողքի շարելով՝ ստացի՛ր գեղեցիկ նախշ:**

**բ) Գունավոր թղթերից պատրաստի՛ր քառակուսիներ, դրանք երկտակ ծալի՛ր, ծալված մասի վրա մատիտով գծի՛ր կամայական եզրագիծ և մկրատով կտրի՛ր: Բացի՛ր թուղթը և նայի՛ր ստացված պատկերը (Հավելված 9):**

Այս առաջադրանքը նման է նախորդին, սակայն այս դեպքում սովորողը միևնույն պատկերից կտրում է մի քանիսը և դրանցից հավաքվում նախշ: Առաջադրանքի երկրորդ մասում երեխաներին առաջարկվում է հորինել համաչափ պատկեր՝ կամայականորեն եզրագծելով: Ուսուցիչը դիմում է աշակերտներին. «Երեխանե՛ր, այժմ թուղթը երկտակ ծալե՛ք, վրան կամայական եզրագիծ գծե՛ք և կտրե՛ք: Տեսնենք՝ ի՞նչ կստացվի»: Եզրագիծը գծելիս ուսուցման դժվարություններ ունեցող սովորողին կարող է կա՛մ ուսուցիչը ուղղորդել, կա՛մ օգնել դասընկերը:

Նմանատիպ առաջադրանքները երեխաների մոտ ձևավորում են ստեղծագործական ունակություններ, նպաստում տրամաբանության և երևակայության զարգացմանը:

**Առաջադրանք 26. Համաչափ պատկերներով բացիկ: Հավելվածից առանձնացրո՛ւ ծաղկի և տերևի համար նախատեսված գունավոր թղթի կտորները, դրանք ծալի՛ր երկտակ, կտրի՛ր նկարի եզրագծով և հերթով սոսնձի՛ր բացիկի հիմքի վրա (Հավելված 10):**

Առաջադրանքը կատարելու համար հավելվածում տրված են բացիկի գունավոր հիմքը և ծաղկի մասերին համապատասխան տարբեր գույների ուղղանկյունաձև թղթերը, որոնց վրա նշված են եզրագիծը և համաչափության առանցքը: Աշակերտը պետք է նախ հավելվածից մկրատով առանձնացնի բացիկի հիմքը և ուղղանկյունաձև թղթերը, ապա նշված առանցքներով ծալի և ծաղկի տերևի ու թերթիկների եզրագծով կտրի: Ստացված համաչափ մասերը սոսնձով ամրացվում են բացիկի հիմքին:

Նպատակահարմար է այս առաջադրանքը հանձնարարել որևէ տոնի նախօրեին: Կարելի է առաջարկել, որ երեխաները նաև մատիտով նախշեր ավելացնեն:

**Առաջադրանք 27. Թղթից գունդ (Հավելված 11):**

Այս առաջադրանքի կատարման համար հավելվածից մկրատով կտրվում են երկու տարբեր գույների շրջաններ, որոնց վրա շառավղի ուղղությամբ կտրվածք է արվում: Երկու շրջանները կտրվածքի մասով միմյանց մեջ մտցնելով՝ ստանում ենք տարածական իր՝ գունդ: Առաջադրանքը նպաստում է երեխայի մոտ երկրաչափական պատկերների մասին գիտելիքների ամրապնդմանը, տարածական պատկերացման և երևակայության զարգացմանը:

Եթե ԿԱՊԿ ունեցող երեխան չի կարողանում մկրատով կտրել, ապա դասընկերը հավելվածից կտրում է գնդերը, իսկ նա միմյանց է ամրացնում դրանք:

**Առաջադրանք 28. Թելից և ստվարաթղթից խաղալիք «Ոսկե ձկնիկ»:** Հավելվածից կտրի՛ր ձկնիկի պատկերը, այն սոսնձի՛ր ստվարաթղթի վրա, մկրատով կտրի՛ր եզրագծով, վրան գունավոր թել փաթաթի՛ր (Հավելված 12):

Առաջադրանքի նպատակն է երեխայի մոտ ձևավորել պարզ աշխատանքային գործողություններ կատարելու հմտություններ, զարգացնել մատների մկանները:

Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ մոտավորապես 1 մետր երկարությամբ հաստ թել (նախընտրելի է՝ դեղին, նարնջագույն, կարմիր գույնի), 20 սմ երկարությամբ և 10 սմ լայնությամբ հաստ ստվարաթղթի կտոր: Հավելվածից հարկավոր է եզրագծով կտրել «ոսկե ձկնիկի» նկարը, այնուհետև այն սոսնձել ստվարաթղթի վրա և չորանալուց հետո նորից եզրագծով կտրել: Ստացված ձկնիկի վրա փաթաթվում է թելը՝ ինչպես նշված է նկարում:

Եթե երեխան չկարողանա ինքնուրույն կատարել առաջադրանքը, ապա մկրատով կտրելու աշխատանքը կարող է կատարել դասընկերը, իսկ ԿԱՊԿ ունեցող երեխան, հետևելով ընթացքին, կարող է օգնել սոսնձելիս և թելը փաթաթելիս:

**Առաջադրանք 29. Աշխատանք թելերով: Թելից տիկնիկներ:**

Այս առաջադրանքի նպատակն է երեխայի մոտ ձևավորել պարզ աշխատանքային գործողություններ կատարելու հմտություններ, զարգացնել մատների մկանները:

Առաջադրանքը կատարելու համար հարկավոր է ունենալ 10-11 մետր երկարությամբ որևէ գույնի հաստ թել, մոտ 30 սմ երկարությամբ մեկ այլ գույնի հաստ թել և 10 սմ երկարությամբ ու 6 սմ լայնությամբ հաստ ստվարաթղթից ուղղանկյունաձև նմուշ: Թելը փաթաթվում է ստվարաթղթին 40-50 անգամ՝ կախված թելի հաստությունից (որքան հաստ է թելը, այնքան կարելի է ավելի քիչ փաթաթել): Եթե այս

առաջադրանքը երեխան չկարողանա ինքնուրույն կատարել, ապա հիմնական աշխատանքը կարող է կատարել դասընկերը, իսկ ուսման դժվարություններ ունեցող երեխան, հետևելով ընթացքին, կարող է օգնել կապելու հանգույցները կամ պարզապես կատարել այն գործողությունները, որոնք կկարողանա:

**Առաջադրանք 30. Նվերների տուփ: Հավելվածից մկրատով կտրի՛ր տուփի հիմքը, նշված տեղերից կտրվածքներ արա՛ւ և սոսնձի՛ր, ինչպես նշված է նկարում: Արդյունքում կունենաս գեղեցիկ տուփ նվերի համար: Քո պատրաստած տուփը կարող ես ձևավորել՝ վրան գունավոր թղթից տարբեր պատկերներ սոսնձելով (Հավելված 13):**

Առաջադրանքը կատարվում է հավելվածի օգնությամբ: Հավելված 13-ում տրված է տուփի փովածքը: Հարկավոր է այն մկրատով կտրել եզրագծով, նշված 4 կողմերից կտրվածքներ անել և, գիրք-տետրում բերված հաջորդական քայլերով սոսնձելով, պատրաստել տուփ: Նախքան սոսնձելը տուփի փովածքը կարելի է ձևավորել գունավոր մատիտների օգնությամբ կամ այլ տեղից կտրված փոքր նկարներ սոսնձելով:

Այս առաջադրանքի նպատակն է երեխայի մոտ ձևավորել պարզ աշխատանքային գործողություններ կատարելու հմտություններ, զարգացնել մատների մկանները: Զույգերով աշխատանքը կնպաստի երեխայի մոտ համագործակցային հմտությունների ձևավորմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Տեխնոլոգիա: Երկրորդ դասարան/Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան.- Եր.: Տիգրան Մեծ, 2020.- 68 էջ:
2. Технология. 2 класс: учебник/ Н.М. Конишева.-Смоленск: Ассоциация 21 век, 2019.- 160 стр.
3. Технология. Ручной труд. 2 класс: учеб. для общеобразоват. организаций, реализующих адапт. основные общеобразоват. программы / Л. А. Кузнецова. - М. : Просвещение, 2016. - 110 с.
4. Технология. Ручной труд. Методические рекомендации. 1-4 классы: учеб. пособие для общеобразоват. организаций, реализующих адапт. основные общеобразоват. программы / Л. А. Кузнецова. - М. : Просвещение, 2016. - 366 с.
5. <https://e-ipar.ru/ptitsy-iz-plastilina/pingvin>
6. <https://www.psixologicheskoezerkalo.ru/applikacii-iz-osennix-listev.html>
7. <https://www.learningthroughliterature.com/yarn-doll-tutorial/>



**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ**

**«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 2»**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ**

**ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ**